

- 18 Ընդ որս էին իսկ՝ ոմանք ի յետնոց,  
Այլ եւ այլ եկաց եւ կեսարացւոց,  
Որք շահեալ անդէն՝ գումարս գրբամոց,  
Շքեղ թըւէին յաշըս խուժայնոց:
- 19 Այս վատ խումբ Հայոց՝ անտակրեալ անդամ,  
Խըմբիւր ի ծածուկ՝ յայտնի շատ անգամ,  
ԶՏօվուէն զանպատեհս գողէր զեւ չարկամ,  
Չայնն որոյ սարսեալ՝ ցողայնոց երամ:
- 20 Պակուցեալ ուրեմն՝ Յօհաննէս բաբուն,  
Պատրիարզն Հայոց Հըռովմայ Նորոյն,  
Փախըստեայ գաղէր զանձն ի ներքնատուն  
Յարկին Ըռաստեանց՝ որ պերճն էր տեղոյն:
- 21 Գրիգոր Պատրիարզն Երուսաղեմի,  
Որ յայնժամ հիւանդ ճընշիւր ի մահճի,  
Մըտեալ յօր տօնի՝ ի պատգաբակի,  
Մուծէք զիս ասէր անդ յեկեղեցի:
- 22 Ուր ամօք խրատիւք եւ ձայնիւ ասեղ  
Յուցանէր ազգին՝ գոլըն յոյժ մեծ մեղ  
Ապերախտութիւնն անձանցն անշքեղ,  
Յուցեալ առ Յօհան՝ Պատրիարզն անմեղ:
- 23 Ապայ ս՞պառնացեալ՝ յայտ ազգին ասէր,  
Ի փոխել գոցա Պատրիարգըն ձեր,  
Ընտրեսցի այլ ոք եւս գահիս ի տէր:  
Զի չէ՛ ինձ հաճոյ ազգ խըռովասէր:
- 24 Չայն լուեալ յուզաց՝ փոքր ինչ զըղջանան  
Ի չար խորհրդոց՝ զայն օր հեռանան.  
Բայց յիւրեանց փրսխած անդրէն իսկ դառնան,  
Գրբզըռեալ զամբոխն եւ եւս չարանան: